

ինչպէս՝ Պիպէռճի օղու Մովսէս վ., Ումիտ օղու Սիմոն վ., Ալլահաճիքի օղու Յովհ. վ., Ումիտ օղու Տէր Սահակ, Թինթին Ասլան օղլուի կնոջ եղբայրը Կարապետ վ., որոնք վանքը կը նստէին, եւ ուղղափառ տներու մէջ պատարագ կ'ըսէին: Հայերը գրգռուեցան, Առաջնորդին վրայ վազեցին, ան ալ զերենք հանդարտեցնելու համար Տէր Սուքիասը փիլոնազուրկ ըրաւ, եւ խրատեց որ խոհեմութեամբ վարուին, եւ քիչ ետքը Տէր Սուքիասին ներեց: Այցելու վարդապետներուն եւ նուիրակներուն թոյլ չէր տար որ եկեղեցին քարոզեն, այլ վանքը կը հիւրընկալէր, եւ ողորմութիւնն ինքը կը հաւաքէր, ձեռքը կու տար, կը ճամբէր: Այսպէս առաջնորդութեանը վերջին տարին՝ Պետրոս Քիւթիւր վ. իրրեւ նուիրակ Գաղատիա եկաւ. Մովսէս Եպ. թող չտուաւ որ քարոզէ եւ խոստացաւ որ ինքը նուէրը կը հաւաքէ. Քիւթիւր ոտք կոխեց անձամբ կատարել եւ կոնգակը ցուցուց. առաջնորդը կոնգակն առաւ պատուեց եւ կրակը նետեց: Քիւթիւր կատղած՝ Ս. Սարգիս եկեղեցին գնաց եւ Մովսէսին դէմ սկսաւ քարոզել. Ժողովուրդը ղայրացած՝ վրան յարձակեցաւ, ծեծեց, եւ Քիւթիւր հազիւ կրցաւ ինք զինք Գաղատիայէն դուրս նետել: Մովսէս ինը տարի առաջնորդութիւն ըրաւ եւ երկու կողմը հաշտ պահեց: Վերջին տարին՝ 1735ին Տէր Սուքիասը կանչեց, խոստովանեցաւ, ուղղափառ դաւանութիւն տուաւ, եւ եօթն եկեղեցեաց Ժողովուրդեան ծանոյց, որ Մեծ պահոց մէջ Ս. Գր.